




ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԳԵՂԱԿԱՆ ԺՅՈՒՆ

ԵՐԶԱՐԱՆԻ ԳԵՂԱԿԱՆ ԺՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ


ԹԻԻ 57

ՕԳՈՍՏՈՍ 11/24 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱՐԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի † Օգոստոս 11/24 † Թիւ 57

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

ՓԱՌԱԽՈՐԵԱԼ ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ

Երկինք ու երկիր հրճուելոյց տօնախմբութեան մէջ են այսօր. ան-
մահական մեղեդիներով, յետ Քրիստոսի՝ անմահութեան նախատիպ պատ-
կեր՝ Սրբոյ Կուսին փառաւորութեան օրը, 'Իշխոյին' որ Մայր է և Դուս-
տրը և Հարսն Աստուծոյ:

Զինուորեալ ու երանական Եկեղեցւոյ կողմանէ ընդհանուր ցըն-
ծութեամբ տօնուող Վերափութման տօնին առթիւ կ'արժէ ուրեմն որ
ամենայն որդիական ակնածանօք յանդգնինք ճառել՝ մանկաբար թո-
թովելով, « Քանզի անճառ է խորհուրդ փառաց Կուսին » (Անձ.
Փոխմ.), — և կարդան իւր ջերմեռանդ զուակունք՝ ի խինդ առջեալ:
Պիտի ըլլայ անձկալից տրիտուր որդիական անհասնում յարգանաց և
պաշտելութեան առ Մայրն զթաժ և Թագուհին վեհապանծ, և պիտի
լլլայ խունկն հրայրեաց սրտի մը՝ որ տարագիր կը տառապի ընդունա-
նութեան ու արտասուաց հովտին մէջ, կարօտակէզ ակնկառոյց՝ անվերջ
երանութեան գաւառին, ուր հոգեղէն զուարթնոց անթիւ բանականքն

ու երանելիաց խումբերը կը գեղազարդեն զՎարդն յաւերժական, զՄանաժին Կոյսն անապական և Մայր, զԴիւանայն մեծ և հզօր՝ աշխարհաբարսիւն իշխանութեամբ, Ամենառատ նիւթ է այս ի սնպատում հրճուանօք։ սակայն շատ պատճառներով ստիպուած ենք սեղմել ու համառօտել, յակամայ կամս։ Ուստի չորս մասերու մէջ — Ս. Կուսին Ննջումը, Վերափոխումը, Փոխման ապացոյցները, Փառաւորութիւնը, — հակիրճ պիտի ամփոփենք այս հիանալի նիւթը, և պիտի ըսենք զայն ի մխիթարութիւն որդեկաց Ս. Կուսին։

Ա.

«Տէրն տեաքց խոնարհեալ յաւանդումն
Ամենասուրբ հոգւոյ Մօր եւ Կուսին»:
Տէր. յեղև. Բ, աւ. Փոխմ.

1. Այս տօնախմբութիւնը նախ՝ կը յիշատակէ մեզ Երանելւոյ Կուսին ցանկալի մահը։ Այո՛, պիտի խոստովանինք որ մեռաւ նաև ծնողն կենաց, և Կոյսն անարատ ու Մայրն կենդանութեան մարդկան, ծնած մահկանացու, հասոյց կամակար բնութեան վերջին պարտքը։ Իւր որբանեալ հոգին առժամանակ մի բաժնուեցաւ իր կուսական մարմնէն, յորում Քրիստոս Աստուած մարմին զգեցած էր։ Մարիամու աւանդանշնորհումներուն ու փառաց անխմանալի և զգլխիչ լիութիւնն և անխիաղ իսկութիւնն է որ տարակոյս մը փայլատակեցուցած է ոմանց ջեզմեռանդն հոգիներուն մէջ՝ անոր մահուան ստուգութեան վրայ, ինչպէս՝ օրինակի աղագաւ կը գրէ Ս. Եպիփան Ընդդէմ Հերեսիով տաց մատենին մէջ և նոյն իսկ մեր օրերու քանի մը Աստուածաբան վարդապետներ ի զուր պնդեցին։ Այլ Կաթողիկէ Եկեղեցին բնաւ տարակոյս չունի Աստուածածին Կոսի մահուան իրականութեան վրայ։ Ի հնումն երկու զանազան տօներ կը տօնուէին. մին Ննջումն Ս. Կուսին, մըւսը Փոխումն։ Իրենց գրութեանց մէջ առաջինը առհասարակ գործածած են հին Ս. Հարք, մանաւանդ Արեւելեան Եկեղեցւոյ մէջ։ Յոյն Հայրերն շատ ճառեր յօրինած են՝ յորջորջելով զննջման Ս. Կուսին. իսկ ննջումն կամ Քուն կամ Հանգիստ բացայայտ կը նշանակէ մահը՝ նուիրական լեզուով։ «Այսօր յերկնից իջեալ Հօր Բան, ի Հօր Կուսի Մօր քո Ննջման» (Անձ. Փոխմ.) նոյն բանը կը հաստատէ Եկեղեցին՝ նաև իջ ծիսական ասացումներով, ինչպէս մեր շարականաց մէջ ալ կը կրկնուի մերթ ընդ մերթ՝ «աւանդումն հոգին»։ «Այսօր Տիրամայր Սրբառնի Կոյսն, աւանդեալ զսրբասնեալ հոգին ի ձեռն հրեշտակական դասուց, որպէս գերարփի փայլեաց» (Օրհ. ա. աւուր փոխման)։ «Աւանդեցեր զոստրք հոգի ի ձեռն Սրբոյ քո միսմի» (Անձ. Փ.), եւ Ս. Եկեղեցին նկատած է այս տօնը իբր անշք Ս. Կուսին՝ ի մահուանէ ի կեանս, ի գերեզմանէ յերկինս։ Իր Աստուածային Որդին ալ մեռած էր, իրա-

կանապէս : Իր Աստուածայէն Որդին , աղբիւր անմեղութեան , որ մեր պարտքը վճարելու և մեզի օրինակ և յոյս և խրախոյս ներշնչելու համաւ մեր բոլոր տկարութիւնները առած էր , մինչ մենք «Մահու վախովը կ'ապրէինք միշտ՝ վտարանդրեալք ի ծառայութիւն» , այս սիրահար Փրկիչն և անզուգական մեր Բարեկամը «Զմահ ճաշակեաց» , դառնադառն : Եւ իր սրբանուէր Մայրն ալ , որ ցաւոց բաժակին դառնութիւնը քամեր էր արդէն ի Գողգոթա , խաչին տակը արձանացած՝ Մարտիրոսներու թագուհի , նմանակից եղաւ իր Որդւոյն՝ ինքն ալ նայնպէս ճաշակելով մահը :

Նոր Եւա , բաժնեկից ու փրկութեան գործակից եղաւ նորոյն Ազգամայ . և մեռաւ իբրեւ ճշմարիտ մարդ մահկանացու , զի մի՛ գուցէ տարակոյս մը ծագի իր Որդւոյն մարդկութեան ու մահուան ճշմարտութեանը վրայ , այլ մանաւանդ տեսնուի թէ այդ զարմանալի Կոյսն ալ մեր ընտանիքի անդամ է : Մարդկութեան Մայրն գթած ինք նախ պէտք է խմէր մահու բաժակը , որպէս զի իր տառապեալ որդւոցը համար նուազ դառն ըլլար ան , և ինքն ալ անոնց հոգեվարքի տնաւոր վայրկեաններուն՝ վշտացելոց արագահաս միտթարիչ ըլլար մայրաբար . «ՊՍՐՏ ԻՍԿ ԷՐ նեա անեկայնիւ եղբարց նեանել , զի ոչորմա՞ծ շինիցի եւ հաւատարիմ . . . կարող՝ եւ փորձանաւորացն օգնական լինելը» (Երբ . Բ . 17—18) : Սակայն անբիժ և անարատ Կոյս Աստուածամայր , ո՛չ իբր պարտք մը կամ պատիժ , ինչպէս թշուառ որդիքս Եւայի , ճաշակեց մահը , այլ յօժարակամ . «Զի մեղս ոչ գործեաց» : Իր մահը եղաւ լոկ հեռեւութիւն մը մարդկային ընտելեան , և ո՛չ «բոշակ մեղաց» : Մենք կը մեռնինք , որովհետեւ Ազգամայ մեղայ պատճառաւ . կորուսինք այս մարմինն անմահ պահելու պարգեւներն . իսկ Մարիամ մեռաւ , նմանելու համար իր Որդւոյն :

2. Այլ ո՞վ է որ ըսաւ . «Ո՛չ տալիս արդոյ քու՛մ տեսնել զապականութիւն» : Ո՞վ ըսաւ . «Ա.ի՛ Տէր ի հանգիստ քո . ԴՈՒ ԵՒ տապաւնակ կտակի արքութեան քո» : Եւ ո՞վ ըսաւ . «Կացցէ դժուոյ ընդ աջմէ քու մտի» : Ըսաւ անտուտ Բանն Աստուծոյ , որ արձանայած է ի Ս . Գիրս . թէ և առաջինները գլխաւորաբար Յիսուսի Սուրբ Մարմնոյն համար , սակայն այս խօսքերը միեւնոյն յարմարութիւնը պէտք է ունենան նաեւ անոր Մօրը համար : Տէրը՝ մեր ամէն տկարութիւններն առաւ , բայց ո՛չ նուաստացուցիչ ապականութիւնը կամ ապականիչ հիւանդութիւնները . զի ասոնք փրկագործութեան համար անհրաժեշտ բաներ էին , ինչպէս կ'ըսէ Ս . Թովմատ : Արդ իր Մայրը , որուն համար ամէն բան բացառութեամբ եղած է , նոյնօրինակ ազատ կացուցուեցաւ գերեզմանի ապականութեանէն . իր ամենակարող Որդին անպատճառ այսպէս ուզեց : Ո՛չ , կենաց այս մայրը կուտական գեղեցկութեամբն երկինքն իսկ յապուչ կրթող այս չնախարհիկ արարածը , չկրկնաւ խօթացեալ ծերութեան մը

բեռան տակ, տխուր աւերակ ինքնիրեն. ո՛չ, չկրցաւ երբեք մեղքը իր ամօթալի հետքերը զրոյմել այն սրբազնասուրբ մարմնոյն վրայ որ քնաւ իրեն հպատակ չեղաւ: Չեղաւ ո՛չ սպառումն և ո՛չ խօթութիւն որ բաժնեց Մարիամու անարատ հոգին՝ իր մարմնոյ սրբազան տաճարէն:

Ըստ Սրբոց Հարց. Մարիամու մահը քաղցր քուն մը եղաւ. հոն գեղմայլ յափշտակութիւն մը, նման Ադամայ քնոյն յորմէ ծնաւ Եւայ: Անոր համար է որ Աստուածածնի երանական մահը՝ միայն նկշտմն կը կոչեն. անոր համար է որ Մարիամու մեռած ատենուան ճառագայթարձակ գեղեցկութիւնը անհամեմատ բառերով կը գովարանեն: Անոր համար կ'ըսեն. «Մեռաւ՝ այո՛, բայց մեղմէ տարբեր կերպով. գերազանցապէս աւելի ազնիւ և չքնաղ եղանակաւ» (Ս. Անդր. Կրեա), Եւ կ'ըսեն. «Ո՛չ ծննդեան ցաւերն զգաց ո՛չ մահուան. ինչպէս հնար էր որ ապականութիւնը տիրէր այն մարմնոյն, ուսկից ծնաւ կեանքը» (Ս. Յովհ. Դամ.): Ո՛չ, քնաւ չպիտի կարենամ հաւատալ որ Ս. Աստուածածին Կուսի նուիրական մարմնը, որ տաճար եղաւ. Հոգւոյն Սրբոյ և Օթարան Ամենակալին, որ տուաւ մարդացելոյն Աստուծոյ մարմինը որ «Կազմուեցաւ Մարիամու ամենամաքուր արիւնէն», մատնուած ըլլայ ապականութեան: «Կ'ըմբռնեմ թէ Երանելի Կոյսը հիւանդներու պէս անկողին չինկաւ. զի ո՛չ խօթութիւնէ տառապեցաւ և ո՛չ սկարութեամբ զգետնեցաւ. այլ յարգութեամբ ծնրադիր ու երկինքն ի վեր ձեռնամած, աղօթելով սրբանեալ հոգին աւանդեց ի ձեռս Աստուծոյ, ինչպէս որ Ս. Յերոնիմոս կ'աւանդէ առաջին միայնակեաց Պօղոսի մահը» (Մուշեղ): Եւ վերջապէս առածի տեղ անցաւ սա խօսքը. յղացեալ առանց մեղաց, յղացաւ անապական, ծնաւ զորդին եւ մեռաւ առանց ցաւոց:

3. «Կը հաւատանք որ մեռաւ առանց ցաւոց և Ի ՍԻՐՈՅ» (Եր. Աղբ. Մեծ): Ահա Մարիամու կենաց թելը իզոյ պատճառը, ըստ Ա. Հարց և վարդապետաց Եկեղեցւոյ: Սիրոյ մեջ, այս ինքն շնորհքի մէջ մեռնիլ, հասարակ է Աստուծոյ բարեկամներուն. սիրոյ համար մեռնիլ, հասարակ եղած է մարտիրոսաց և անձնանուէր քաջաց ու նահատակներու. իսկ ի սիրոյ մեռնիլ է երբ մահուան մրակ պատճառը սերն է. «Բոլորն է իբրեւ գիւն սեր» (Երգ. Ը. Ե): Մարիամ Ենորհօք ի եղաւ միշտ. ի Գողգոթա մարտիրոսացաւ. և ի սիրոյ կիզեալ՝ ննջեց: Սիրոյ հարուածն էր որ վերջ տուաւ մահկանացու կեանքին: «Անհնարէն է այլազգ ենթադրել. ամենէն ազնիւ մահը՝ արարածոց մէջ գտնուած աւ մենէն ազնիւ կեանքին. մահ՝ որով նոյն իսկ հրեշտակներն անգամ պիտի ցանկային մեռնիլ եթէ հնար ըլլար (Ս. Փրանկ. Սալ. Յղ. Սիր. Աստուծոյ): Ս. Ստանիսլաս մը «Կ'այրէր կը մրկէր սիրով աւելի քան ջերմով» (Ի Փմկրգ.), և արտին կրակը չէին կրնար մարել սառեր ու ջուրեր. Ս. Թերեզա մը կը մեռնէր՝ չկարենալ մեռնելուն համար, և վերջ ի վերջոյ «կը վախճանէր ո՛չ այնքան հիւանդութեամբ այլ առաւել

Աստուծոյ սիրոյն անտանելի հրդեհով» (Ի Ժմկրգ.)։ զարմանալի աղա-
խինն Աստուծոյ ձէմմա իբրեւ խուսկ կը սպառէր Աստուծոյ սիրոյն կրա-
կով, կը խորտակուէր կուրծքը անոր բռնութենէն և սիրտը կ'ուռէր
արեան հեղեղներով, և կը գոչէր. «Ա՛լ չեմ կրնար դիմանալ»։ և առանց
Աստուծոյ հրաշքին, հազար անգամ պիտի մեռնէր ի սիրոյ։

Այլ մէ՛թէ հաւասարութեան համեմատութիւն մ'ընելու համար է
որ կը յիշենք Սուրբերը. օ՛ն անդը, քա՛ն լիցի։ Մարիամ աննման
ստեղծուած, առաւել քան ստեղծուած, ո՛չ միայն Սրբոց և հրեշտակաց
շնորհքներն յինքեան կը բովանդակէ, այլ այն ամէն շնորհ որ հետք ըլ-
լայ երբեք տրուել արարածի մը. ամէն բանէ վեր է Մարիամ, բաց
յԱստուծոյ։ Ամբողջ արարածոց աստուածասիրութիւնը Մարիամու սի-
րոյն քով կայծ մըն է հրդեհի քով, կաթիլ մը՝ ուղեւանոսի քով, հիւլէ
մը՝ տիեզերաց քով։

«Կ'երդուրեցնեմ գծեզ, ո՛վ Դստիք Երուսաղեմի, եթէ գտնեմ իմ սի-
րելին, ըսե՛ք իրեն թէ ես սիրով կը նուաղիմ» (Երգ, Ե. 8)։ — «Հաստատե-
ցե՛ք զիս իւղով... զի խանդակաթ եմ ես սիրով» (Բ. 5)։ և սիրոյ արա-
գութիւնը նկարագրելով. «Դառնի՛ր (եկո՛ւր) նմանե՛ք այլեւմեկի կամ եղ-
նիկներու հոգեւոր» (Բ. 17)։ Ո՛հ, անդիմադրելի սէր. ա՛յնքան բուռն
է զինք ճնշող տարփանքն, ա՛յնպէս անգութ են բաժանումի տարինե-
րը որոնց համբերութեամբ կը հանդուրժէր, զիւցազնաբար զոնկով զին-
քը, քանի որ գիտէր որ դեռ հարկաւոր էր իր ներկայութիւնը նորա-
ծին Եկեղեցւոյ բարեոյն համար։ «Մի՛ փնտռէք, ուրեմն, Ս. Կուսին
մահուան ուրիշ պատճառ մը։ Իր սէրը ա՛յնպէս հրաբորբոք էր, ա՛յն-
պէս բուռն և ա՛յնպէս բոցածաւալ, որ իր արձակած մէն մի հառաչ կա-
րող էր խորտակել այս մահկանացու մարմնոյ ամէն կապերը. իր մէն մի
կարօտակէզ հեծութիւնը կրնար անոր ամբողջ ներդաշնակութիւնը
խանդարել. դէպ յերկինս առաքած մէն մի բաղձանք կարող էր իր ետե-
ւէն քաշել բովանդակ հոգին։ Ըսի ձեզի, ո՛վ քրիստոնեայք, որ իր
մահը հրաշալի է. բայց պէտք է կարծիքս փոխեմ. մահը չէ հրաշքը.
նա մանաւանդ հրաշքներու վախճանն է այն։ Շարունակեալ հրաշքն
այն է որ Մարիամ կրցած ըլլայ ապրիլ առանց իր Սիրելւոյն... բայց
վերջապէս սէրն այն աստիճան կատարելութեան հասաւ Մարիամու սրբ-
սին մէջ, որ երկիրը չէր բաւեր զայն բովանդակելու. որով չկայ ուրիշ
պատճառ Մարիամու մահուան, բաց ի սիրոյն» (Պոսիւէ, ճառ ա.)։ «Եւ
Ս. Կուսին մահը Սուրբերէն բոլորովին տարբեր էր. կ'ըսէ Ս. Ֆր. Սա-
լեղեան, որոնք կ'ուսնենան շատ պաշտօններ, շատ ոստումներ, շատ յա-
վըտակութիւններ, շատ նուաղումներ, շատ տագնապներ... Աստ-
ուածային սէրը ամէն վայրկեան կ'աւելնար մեր փառաւորեալ Տիրուհի-
ւոյն սրտին մէջ. բայց քաղցր, հանգարտ և շարունակ անեցումներով,
առանց գրգռութեան, առանց սարսելոյ, առանց ո և է բռնի ճնշումի»։

Նման էր գեղեցիկ արչալոյսի մը որ միշտ կ'ածի պայծառութեան մէջ, բայց այնպէս հաւասարաբար որ կարելի չէ նշմարել աստիճանները: Եւ երբ երկնաւոր Սիրելին, իր միածին որդին Յիսուս, իւր Սիրելի Մօր ականջին փոխաց աս հրաւերը՝ «Մըսախաք արարեալ զմեզ՝ քոյր մեր հարսն, մըսախաք արարեալ զմեզ միով ակաւն քով (սիրով)»: «Առի՛, ե՛կ, մերձաւոր իմ, գեղեցի՛կ իմ աղանձի՛ իմ զի անս ձմեռն եսնց» (Երգ, Դ. 8. — Բ. 10), ան առեն երկուքին սիրոյն առ միմեանս ունեցած ձգտութեամբ, Մարիամու ամենասուրբ հոգին բաժնուեցաւ սրբանուէր մարմինէն, ինչպէս հասած պատու մը զոր ամենաթեթեւ շարժում մը վար կը ձգէ ծառէն: Ինչպէս բուրումնաւէտ խունկ մը որ կրակի ազդեցութեամբ վեր կ'ելլէ թեթեւ: «Ո՞վ է սա, որ եղալ զալ յանապատէ՛ իր-րեւ զծուխ ծառացեալ բարձրացեալ, զմուռս եւ կնդրուկ յաւենայն փոշոյ իւղագործաց» (Ե. Գ. 6): Երբ կը բաժնուէր մարմինէն այս սիրատուոր հոգին, ի՛նչ անպատում հառաչներով և խօսակցութիւններով կ'արտայայտուէր Սերովբէից ու Քերովբէից հետ, և կը սլանար՝ յախտենաբար քաղցր գիրկընդխառնումով, սիրատուոր համայններով իր Աստուածային Որդւոյն հետ (Երգ Ա. 1): «Այսօր բնաւ չընդհատուելիք գրկախառնութեամբ ամբողջ Փեսային կը միանայ Երանելի Կոյսը» (Պերսոն. Դ ի վր. Մեծ.): Այսպէս մեռաւ ահա Ս. Կոյսը, Աստուածային սիրոյ սուրբումով մը, առանց խորտակման, առանց բռնութեան, առանց ճնշումի. և իր հոգին սաւառնեցաւ տարուեցաւ յերկինս՝ սրբազնասուրբ տենչանաց թռուցեալ ամպերուն վրայ:

Ողջոյն հեզի, ո՞վ Մարիամ, շնորհիով լեցուն:

Տեք հեզի հետ է. դուն կիցերու մեջ օրհնուած ես, օրհնուած է քու արգանդիդ պսուղն՝ Յիսուս:

Սրբուհի՛ Մարիամ, Աստուծոյ մայր, բարեհօտէ՛ մեզի՝ մեղաւորներու համար, հիմա եւ Մեր ՄԱՀՈՒԱՆ ԺԱՄՆ Ա՛, Ամեն:

(Շարունակելի)

ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ¹

(Շար. եւ վերջ)

Երանի՛ քեզ՝ որ հովերու լայն պետութիւնն՝
Իպպոլիտէ՛, կը չափէիր աարկներուդ
Մէջը մատաղ. և՛ եթէ նաւազն առագաստներդ
Եգէական կղզիներէն ուղղեց անդին,

1. Տես թիւ 53, էջ 391:

Անտարակոյս հին դէպքերով ելլեսպանտի
 Ափանց հրնչելը լըսեցիր, ծովու ծուփին
 Եւ մռնչելն, մղելով դէպ յափուռնս Հռետեան
 Աքլլիայ գէնքն մեծն Այաքսի ոսկերցը վրայ:
 Վեհանձններու մահն է արդար բաշխիչ փառքի:
 Ոչ նենգաւոր միաք, ոչ չընոր՝ թագաւորաց
 Պահէր դժուար կողոպուտներն Իթակացւոյն:
 Զի դժոխային աստուածներէն գրգռուած կոհակն
 Խրլեց զանոնք նաւու խելքէն թափառական:
 Եւ ինձ որ արդ ժամանակներն ու տենչ պատուոյ
 Կը դեգերցնեն տղգերու մէջ փախստական,
 Ինձ Մուսաններն՝ խորախուսիչ մահացու մտաց,
 Թո՛ղ կուչ ընեն զարթուցանել մեծ Հերոսներն:
 Կ'ըսովին անոնք չիրմաց պահպան. և՛ երբ ժամանակն
 Յուրա թեւերով կ'ուլէ անոնց աւերակներ,
 Պիւմպիլեան Մուսայք իրենց երգով կը խայտայնեն
 Անապասներն և քաղցրանուագ դաշնակու թիւնն²
 Հազարաւոր դարուց յաղթէ ըզլըռութիւն:
 Եւ այսօր խկ խոպանացիալն ի Տրովադա
 Ուխտաւորաց փայլի մի վայր յաւէրժական.
 Յաւէրժական այն Նիմփային համար, որու
 Փեսայացաւ Մեծն Արամազդ. և՛ Արամազդի
 Տուաւ որդի ըզ՛Դարդանոս. և սերեցաւ
 Տրովադա, և Աստարակոս, և յիմնաթիւ
 Առագաստներըն հարսանեաց, և պետութիւնն
 Յուլեան զարմին: Բայց Երեկտրա յորժամ լըսեց
 Պարկայն որ զինք կենսապարգև սուրբ օղերէն
 Կը հրաւիրէր Եղիսական գունդերու մէջ,
 Արամազդայ ուղղեց յետին աղերս. — «Եթէ,
 Կ'ըսէր, քեզի եղան վարսերս ու տեսքս հաճոյ
 Եւ հրսկումներն քաղցր, և եթէ ճակատագրի
 Կամքն ինձ չտար լաւագոյն վարձք, գէ՛թ երկնքէն
 Քու վախճանեալ մըտերմուհւոյն դարձուր նայուածք,
 Որպէս զի մնայ Երեկտրայիդ համբաւն յաւէրժ»: —
 Զայս մնչելով մեռաւ: — Հեծեց Ողիմպականն
 Եւ չարժելով անմահ գըլուխն՝ յորդ կ'անձրեւէր
 Սուրբ վարսերէն Ամբրոսիա Նիմփային վրայ,
 Եւ նուիրական դարձուց մառմինն այն, և չիրիմ:
 Հո՛ն հանգչեցաւ Երեկտոնիոս³. հո՛ն կը ննչէ
 Արդար աճիւնն մեծն Իլոսի⁴, հո՛ն Իլիական

Կանայք, աւաղ, կ'արձակէին վարսերն իրենց
 Ի զո՛ւր ի զուր աղօթքներով մօտիկ օրհան
 Վրտարելով ի յամուսնացն, հո՛ն Կաստանդրա՛ն,
 Երբ չէից ազդամբ բոցեղ կուրծքէն պատգամ կուտար
 Մահացու օրն խեղճ Տրովադայ, եկաւ և հոն
 Ըստուերներու ներքե երգեց սիրալիր տալ,
 Ու թողնիկներն կ'առաջնորդէր, և սիրալեղ
 Իր մրմունջներն կ'տորվեցնէր պատանեկաց,
 Եւ քուքալով կ'ըսէր. «Բաբէ՛, եթէ երբէք
 Արգոսէն՝ ուր Տիտէոսի և Լայերտեայ
 Պիտ՝ արածէք որդւոց ձիերն, չնարհեն երկինք
 Ձեզ վերադարձ, ձեր հայրենիքն ի զո՛ւր փնտռէք.
 Քաղքին որմեր, գործ Փերոսի, պիտի ծրխան
 Նշխարներուն տակը իրենց: Բայց թերափներն
 Մեծին Տրովայ պիտ՝ ունենան բընականթիւն
 Այս շիրմաց մէջ, զի դիշ անշուշտ մեծ պարզեւն է
 Թըլուռութեանց մէջ պահպանել անուն խորոխս:
 Եւ զո՛ւք, հոճի՛ք և՛ արմաւենիք, զորս կը անկին
 Պրիամու նուերն, ո՛հ չուտ, չո՛ւտ ամեցէ՛ք,
 Եւ ոռոգուած այրիներու արտօսներով
 Պաշտպանեցէ՛ք իմին հայրերս, և ով որ գթած՝
 Խնայէ տապարն տէրեւներէն նո՛ր իրական,
 Թո՛ղ չտեսնէ ցաւն ու վիշտ իւր ազգականաց,
 Եւ սրբութեամբ թո՛ղ մերձենայ բազիններուն:
 Պաշպանեցէ՛ք իմին հայրերս:— Պիտի տեսնէք
 Օր մը՝ մի կոյր մուրացիկ՝, որ թափառական
 Շրջի յածի ձեր վաղեմի սասուերաց տակ,
 Ու կը մանէ խորխափելով դամբանաց մէջ
 Եւ կ'ընդգրկէ սափորներն՝ հարցուփործով:
 Պիտի հեծեն գաղտնի անձաւք, և բովանդակ
 Այն շիրմավայր պիտի պատմէ գիլիոն՝ երկիցս
 Հիմանց քանդուած, ապա երկիցքս նորոգուած

1. Հոեեէ դարաւանդ մ'է Տրովայի մէջ, Ելիսպոնոսի ետեւ. անաւասիկ ու մառօս պատմութիւնը հեղինակին հոս երգածին. Թէսիս (Աֆիլէսի մայր) իր որդւոյն սփանջելի դիտմամբ կատարելէն ետք, կը խոստանար ատոր զեմքերը Յոյներէն անուր որ ամենէն աւելի քաջութեամբ կը պատգայանէր իր որդւոյն մարմինը Տրովացիներու դէմ: Արդ Այաքս որ Աֆիլէսէն ետք, Յոյներու մէջ ամենէն քաջն էր եւ Ուլիսես, տեսչացին այս ընծային, որն որ երկրորդին ինկաւ, շնորհիւ իր խորամանկութեան եւ Ակալմեմոնի եւ Մէնէղաուոսի պատգայնութեան: Այաքս պատահածին վրայ այնչափ նեղուեցաւ որ գրեթէ խեղացնոր, զիեւր աեւն շատ մը յոյներ սպաննեց, իր քցմափ քաղաւորներ անոնց մէջը կարծելով. բայց ետք սխալը կտահելով իր սուրովը ինկզիմը սպաննեց: Բայց Ուղիսես

Շրժեղապէս լռիկ մընջիկ շաւղաց վրայ .
 Զի աւելի չքնաղ ըլլայ մեծ յաղթանակն
 Գոռ Պելիդեանց : Նուիրական Պուէտըն մեծ .
 Ամսքելով թաղծեալ ոգիքն իւր հեշտ երգով .
 Յաւէրժացնէ Արգեան իշխանքն մինչև ի ծագս
 Ուր երկիրներ կը գորկէ մեծ Հայրն Ովկէան :
 Եւ քեզ պատիւ , Հեկտո'ր , կը մնայ արցունքներու .
 Ուր որ թափուի վասն հայրենեաց արիւն մաքուր
 Եւ շատ լացուած , և մինչև որ յերկնից արև
 Պիտի փայլի մեր մարդկեղէն աղէտից վրայ :
 Վ Ե Ր Զ

Խարբուքին մէջ հրատարակուող Հոսաշաւղ քերթն կ'արտայայեն հետեւեալը :

ԱԿՆԱՐԿ ՄԸ

ԲԱՐԲԵՐԴԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ԳՈՐԾՔԵՐՈՒՆ ՎՐԱՅ

(Պանիէլ Այգեգործեանի գրուածքն քաղուած)

... Այս տառններս Ամեն . Թերղեան Կ . Պատրիարքին դէմ եղած
 ապստամբութիւնը իւր վերջին ծայրն հասած էր տրդէն : Ո՛չ թէ աղ-
 զասէր՝ այլ ճշմարիտ խռովատէր մարդիկներէ : Պոլսէն և Տիգրանակեր-
 տէն սկսեալ , Հայ-Կաթողիկէ հասարակութեան մէջ ամէն կողմ Ամեն .

իր վերադարձին, Տրովայի անկումէն ետք, Պոսիդոնէն հալածուեցաւ, վասն զի ասոր
 Պոդիսիմոս կիկլոպը մեռցուցած էր նա, եւ իր նաւը ալիքներու սասկուքներէն խորա-
 կեցաւ : Արիլէսի զենքերը որ միշտ Ողիսես վրան կը կրէր, ալիքներուն աւար ինկած, դից
 կամաց համեմատ դէպ ի Հռետ դարաւանդը՝ Այաֆսի ոսկորներուն վրայ հրուեցաւ :

2. Դաշնակութիւն եւ կը յաղթէ եւն . Բերթոններու երգը :
3. Երկնոնիոս . Արեւնի չորրորդ քաղաւարը կը կարծուի :
4. Իլոս Տրովայի ղդեակին հիմնադիրը եղաւ, որ եւ իր անուամբ իլեան յորշո-
 շուեցաւ :

5. Կասսանդրա Պրիամի աղջիկն էր :

6. Հոմերոս :

7. Մեծ հայրն Ովկէան : Յոյն Փիլիսոփայ Թալէսի նամար ջուրը ամէն բանի սկիզբն
 է . բոս այս Փիլիսոփային տեղեւոր կենդանի էակ մ'է, կազմուած նիւթ եւ շարժում .
 բայց նիւթը ամեն իրի հիմն է, եւ նիւթի մէջը՝ ջուրը պէտք է համարուի իբր առաջին
 սկզբունք կարող , երկու եւ ողիւսնելու ամէն իր որ գոյութիւն եւ կեանք ունի . Վարդի-
 կոսն ալ միեւնոյն բանը կ'ըսէ .

... Simul ipsa precatur
 Oceanumque patrem rerum . . .

Պետականին դէմ ցանուած գծաւորական և երկպառակութեան որոմը սկսած էր ծայր տալ և բողբոջել։ Պատրած էին մտքերը վրդոված էին սրտերը մեծաւ մասամբ ո՛չ թէ չարութեամբ՝ այլ թիւրիմացութեամբ և տգիտութեամբ։ Դաշնակցութեան մը ազդակործան ջանքերովը։ Այսպիսի անկարգութեան բուռն հոսանքին դիմագրելու համար Արհ. Ստեփան Եպիս. Իսրայէլեան կը խորհի և կզերով ու ժողովուրդով ստորագրեալ հաւաքական դրութեամբ մրասիրտ և միահոգի կը բողբոջէ և չճանչնար իւր երեսփոխանը Յովհաննէս Էֆ. Գարասաշեան։

Հոս կը ղեկ բողոքագրոյն պատճենը, զոր հրատարակած եմք 1911ի Արմազանցին մէջ, բիւ. 18, էջ 224։

Ամեն. Կ. Պատրիարքին հրամանին վրայ, ոոյն հանրագրութեանն անմիջապէս ետքը Արհ. վիճակաւորը՝ Սեպտ. 20ին՝ ճամբայ կ'իյնայ դէպի Յաւիտենական Բաղաքը։

Փուշ և տատաակ տմէն երկրի մէջ ալ կը բուսնի։ Աստուծոյ ազարակին մէջէն որոմը չպիտի պակսի մինչև հնձոց ժամանակը։ Մ. Ազիզի մէջ ալ տեանուեցան մէկ երկու անձնաւորութիւններ՝ զուրկ Կաթողիկէ սկզբունքներէ՝ որոնք սկսած էին պարզամիտներու առջև խեղաթիւր մեկնութեամբք տարբեր կերպարանքի տակ պատկերացնել Ամեն. Կ. Պատրիարքի գործքերը։ Այսպիսի նենգամիտ կեղծաւորութիւն մը խայտառակելու և ժողովուրդը անվրդով պահելու և ապագային չարամիտներու հնարքով. ու է խոչընդոտի չհանդիպելու համար կանխաւ տեղական կառավարութեանն արտօնութիւն առնուեցաւ, տպագրութեան օրինաց տրամադրութեան համաձայն և շուտաւարիդ անուշով մամաւոր պամաթերթ մը սկսաւ հրատարակուիլ։ Կը հրատարակենք այս սեղ Մ. Ազիզի բարեպաշտ ժողովրդեան պաշտօնական գործքերը՝ որոնք սեղի ունեցած են ի նպաստ իրենց Աստուածընտիր Հօրը Ամեն. Թերգեան Կ. Պատրիարքին հանդէպ։

ՆԵՌԱԳԻՐ

«Պեկ օղլու էրմենի Գաթօղիի Փաթրիկի Թերգեան հազրեքրերին»

«Տէրսաատէթէ ավտէթը ալիյէլէրինիդին գէրիայը հասէնէսիյէ էլ-Ազիզ պիլ ճիւմլէ Դաթօղիկ էվլատը աստրգանչը թարաֆընսուն սաւմարի թէպրիքեաթա իճթիսար իլէ թէպէրրիւքեաթընըզը իսթիրհամ էտէրիմ։

Վէթիլը Մէրխասա, ՊԱՂՏԻԿԵՍՆ

ԲՈՂՈՔԱԳԻՐ

Հուզուրը Ալիի Ճեմապը վիլայեթքեհնահիյէ

Մաարուզը չաքէրանէմիլդ տիր,

Պու հաֆթա փոթթասըդէ վիւրուտ էտէն Տէրսաատէթ էրմէնիճէ

ղաղէթալարնտա տիյանէթիմիզ անքեամիյլէ էրմէնի Գաթօլիկ Փաթրիկիմիդ ըրլպէթիլ Թերզեան էֆէնտի ալէյինէ հուգուզ վէ ատապը ինսանիյէյէ մուզայիր մէգալաթ նէշը օրնորդը, պախուսուս հիշ պիր կէօնա սէլահիյէթ իլէ միւքէլլէֆ օլմայան Տէրսաատէթ էրմէնի Գաթօլիկ ճէմաաթը էֆրատնտան պազըլարը թարաֆընտան Փաթրիքլիկի թանըմամազ սուրէթիյլէ միւշարիլէյի Փաթրիկ էֆէնտի ալէյինէ նա մէշուոսիւմայիլէր վուգու պուլտուզը մաէթթէսիւֆ մանգուրը չաքէրանէմիզ օլմուշ տըր: Մ. Ազիզ վէ թէվապիսի էրմէնի Գաթօլիկ ճէմաաթը միւշարիլէյի Փաթրիկ էֆէնտի ալէյինէ վուգու պուլտան պէր վէճնը մաարուզ հարաքեաթը նամէշուալը տէֆը սուրէթիյլէ հուգուզը ալինիյէմիզի մուհաֆազա պուլտըան Հէօքիւմէթը ատալէթշուարը Օսմանիէմիզէ արզը թէշէքքիւրաթը միննէթտարի իլէ միւշարիլէյի Թերզեան էֆէնտին Փաթրիքլիկինի թանըմազ իսթէմէյէն էլիսաթ մէրտուտէ վէ միւֆսիսէնին հարաքեաթը սէյյիլէրինի գաթիյէն ճէր՝ վէ թագպի՛ն էյլէսիկիմիզի վէ միւշարիլէյի Թերզեան էֆէնտինին Փաթրիքլիկի մէսնէտինտէ իպգասը արզու վէ միւթէրիզլէրին ալէյինէ օլարազ միւշարիլէրին իթթիլիսազ էտէճէքլէրի թէտապիրի թագաթը էյլէյէճէկիմիզալէն լութֆէն մաարուզաթը աճիզանէմիզին ատլիյէ վէ մէզահիպ նէզարէթը ճէլիլէսի փիշկեան: սամիլէրինէ պա թէլէկրաֆ իշար պուլտըումալմալմա միւսաատէի Ալիյէի ճէնապը տէսթուրը ազամիլէրինին շոյան պուլտըրլմաալմալմա վէ իսթիւրհամ էյլէրիզ օլ պապտէ. ֆի 27 Բեանուսն սանի 327 (Բանանայից ստորագրութիւններէն զատ 67 ստորագրութիւնք)

Գեր. Փոխ. Վարդապետը յիշեալ ստորագրութեանց հարազատութիւնը հաստատելով, սոյն աղերսագիրը Վսեմ. Կոստակալին կը ներկայացնէ, որ իւր կանխաւ խոստման համոճախ հետեւեալ հեռագիրը կու տայ:

ՆԵՌԱԳԻՐՆԵՐ

Ասլիյէ վի Մեզահիպ Աեզարէթը ճեղիլէսինէ քիւ 515

էրմէնի Գաթօլիկ Փաթրիքի Թերզեան էֆէնտի ալէյինէ Տէրսաատէթէ հափըլան նիւմայիլէրէ իլթիֆաթ էտիլմէյէրէք մուհալէյին իպգայը մէմուրիլէթինէ միւսաատէ պուլտըումալմալմա մէրքէզը վիլայէթ էրմէնի Գաթօլիկ ճէմաաթը թարաֆընտան վէրիլէն իսթիտալը ումուսմիտէ իսթիւրհամ օլընտըը մաարուզ տըր ֆի 28 Բեանուսն սանի 327

Վալի

Տէրսաատէթ էրմէնի Գաթօլիկ Փաթրիկի Թերզեան հազրէթլէրինէ

Տէրսաատէթտէ իսմէն Գաթօլիքլէրին սուր հարաքեաթլարընա գարչը էլ Ազիզ Գաթօլիկ ճէմաաթըմըզըն էլէտաթ փրօթէսթօնամէի ու

մումիյէմիդի պիթթաստիգ մէտուլը վալիի վիլայէթիմիդտէն ատլիէ վէ մէզահիպ նէզարէթինէ արզ օլընմըշ տըր: 82Քեանունը սանի 327

Վէքիլը մէրխասա

ՊԱՂՏԻԿԵԱՆ

Այս միջոցին Կայսերական հրամանով Ամին. Կաթողիկոս Պատրիարքին իբրեւ Փաթրիք պաշտօնանկ ըլլալը լրագիրներու միջոցաւ հրաշակուած էր արդէն ամենայն ուրեք: Սակայն այստեղ առաջուան պէս կը յիշատակուէր անխափան: Այս կէտը Վսեմ. Կուսակալին ականջը հասցուցած էին, որուն բերանացի պաշտօնական հարցմանը՝ հետեւեալ պատասխանը տրուեցաւ. «Մինչև հիմակ կը յիշատակենք Ամին. Թէրզեան Կ. Պատրիարքը, հիմակ ալ կը յիշատակենք և սակից ետքն ալ պիտի յիշատակենք: Կառավարութիւնը եկեղեցիներու շեմէն ներս բնաւ իրաւունք չունի մեր հոգեւորական գործքերուն խառնուելու: Տէրութեան հրամանովը չենք սկսած այս մեր հոգեւոր արարողութիւնը Օսմ. Տէրութեան գոյութենէն ալ առաջ ունէինք: Մինչև հիմակ Օսմ. Վեհափառ Կայսրներն լիովին ազատութիւն պարգեւած էին Քրիստոնէից հոգեւոր պաշտօններուն, և ո՛չ իսկ նախորդ Ապա-իւլ-Համիտ Կայսրն զխողութիւն մ'ըրած է: Ազատութեան օրով պիտի տեսնէինք այս ընթացքը: Այս մասին արդէն սխալ քայլ մը առնուած է 1856ի Փարիզի դաշնագիրը չյարգուելով: Սխալ քայլ մըն ալ մեր Կ. Պատրիարքներու յատուկ նոյն իսկ արքունական Պերաթի տրամադրութեան չհետեւելով: Ասոր համար ալ Կառավարութիւնը մեր Ամին. Թէրզեան Պատրիարքի իբրեւ Փաթրիք պաշտօնանկութեան առաջին պատճառը ժողովրդեան վանգատներուն կ'ընծայէ: Ինչ որ Պէրաթի տրամադրութենէն բոլորովին դուրս է: Կ'ազաչեմ որ չողոքորթ մարդկանց խօսքերուն բնաւ կարեւորութիւն չտաք, որոնք Ձեր թանկագին ժամանակը գողնալ կ'ուզեն, և քիչ մը այս մեր խնդիրը ուսումնասիրէք. և ապահով եմ թէ անպատճառ իրաւունք պիտի տաք լսածներուս»:

ՆԵՌԱԳԻՐՆԵՐ

Տեղաւոր Գաթրիք Փաթրիքիսանեպիսե Սերիիսֆոյո:

Իսթայիլեան Հագրեքդերինե

Գաղանիյնի մէվզուլայա բիայէթէն էլ Ազիզտէ պիլճիւմլէ բուհպան վէ սովամ բիթպէթլու Թէրզեան Կաթ. Փաթրիքիմիդի զայտը հալաթ իլէ թանըրդ. 24/4 Ապրիլ

Վէքիլը մէրխասա

ՊԱՂՏԻԿԵԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՏՈՒՄԻ ՓԱՅՈՒՄԻ ՓԱՅՐԻՖԻ
ԹԵՐԳԵԱՆ ՀԱՊԵՐԵՐԵՐՆԵ

Իսրայէլեան Անկախագոյն Եֆէնտի Սալիմէն Վէ Միսլի Նամէսպու Ք
Հայէթ փարլազ Վէ մութանթան պիր սուրէթատէ գապուլ օլընար 1:24
Նիսան 327

Վէքիր մէրխասա
ՊԱՂՏԻԿԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՌԱՄ

Մեծ հանդիսութեամբ կատարուած է ըստ սովորութեան Ս. Քահանայապետ Պիտ ժ. Բ
գահակալութեան իններորդ տարեգարձը Արարողութիւնը տեղի ունեցաւ Վատիկանու ա-
պարանից Սիքստինեան Մատրան մէջ: Մեծաւ հանդերձանօք հոն ուղեւորեցաւ Ս. Քահա-
նայապետը, անցնելով Կոստանդինեան և Արքայական դահլիճներէն, օրհնելով հաղարի մօտ
ուխտաւորներ որոնք հեռաւոր տեղերէ եկած էին, որոնց մէջ կային նաև Հռենգարիոյ Սթրի-
կանիա գաւառին ուխտաւորները: Ձայնաւորն ըրաւ Կարգ. Մէրի Տէլ Վալ. յաւարտ սրոյ
Սրբազանը Քահանայապետական Օրհնութիւնը տուաւ ներկաներուն և Կարգինայ Մէրի
տէլ Վալ հրատարակեց լիազատար ներողութիւնը զոր երիցս Երանեայ Հայրն կը շնորհէր
ներկայից: Ներկայ էին բազմաթիւ Կարգինայներ. դասի մէջ կար Ս. Պապին քոյրը: Կը
գտնուէր նաև Դուքսն Մօնթանսիէ. Ս. Աթոռայ քով եղող ամբողջ տէրութեանց գեսպան-
ները, Հռոմայ բարձր Պատրիկ դասակարգը, Մալթայի և Ս. Կերեզմանի Մեծ-Մագիստ-
րոսները, և ըն.:

Աշխարհիս ամեն կողմերէն հաստն բազմաթիւ հեռագիրներ շնորհաւորութեան, լի
որդիական հպատակութեան և ջերմաջերմ մաղթանաց զգացումներով:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Մարտչու Եպիսկոպոսական փոխանարդ Գեր. Կապատեան Վարդապետին առ Արհի.
Արքիարեան Արքեպս. ուղղեալ մի հեռագրէն ցաւօք արտի իմացանք Ձեյթունի Ժողովրդա-
պետ Այվապեան Գեր. Կարապետ Վարդապետին անակնկալ մահուան գոյժն:

Յիշեալն ծնած է ի Մարտչ 1870ին և իւր ուսումն ու քահանայական կրթութիւնն
առած է ի Պէյրութ Յիսուսեան Հարց կղերանոցն և քահանայ ձեռնադրուած է 1907ին:
Քաջ ուսնալ ի դիսուլթիւս, իւր առաքելական սգաւով, քահանայական եռանդեամբ և գոր-
ծունէութեամբ մեծամեծ ծառայութիւններ մատուցած է թեմին և իւր ջերմեռանդաւ
թեամբ և գովելի վարուքն բարի օրինակ հանդիսացած է թեմին քահանայից և ժողովրդեան
և ամենուն սէրն, յարգանքն և փառահռութիւնն առ ինքն գրաւած է ցղերջին վայրկեան կե-
նացն, որով Մարտչութեմ մեծ կորուստ մը կը կրէ յանձին այս առաքինազարդ և բազ-
մարդիւն քահանային:

Տէր շնորհացէ նմա զհանգիստ յաւիտենական և զանթաւամ փառացն զպսակ, և
մենք Ս. Հոգւոյն միթմարութիւնը կը հայցենք վիճակաւոր Արհի. Արքիարեան Գեր. Բ,
Մարտչու կղերին և հանգուցելոյն սգակիր սպգականաց:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Աւստիոյ արտաքին գործոց նախարար Կոմս Պերխոյսի ծանցակէիւ առաջարկի. —
Հեռագիրը հաղորդած էր թէ տէրութիւնը Աւստրիոյ կողմէ հրաւէր ստացած էին մտաւ

ժողովուրդին, իրեւ թէ կը մերժէ անոնց պահանջը՝ այլեւայլ գաղտնի նկատութեամբ, սա-
կայն և այնպէս գրգռելով ժողովուրդը երկու ահաւոր աղաղակ ունի, «կեցցէ՛ պատերազ-
մը, կեցցէ՛ քաղաւորը»։ Ուրեմն «բալլեանս զա՛յ, քաղրայ քո՛ւք»։ Կ'երեւի սակայն թէ
լերան ահազին երկունքի աղաղակներէն վերջը չնչին մուկ ծնանելուն պիտի նմանի և պիտի
ըլլայ *trop de bruit pour rien*։ Անդին կայ ձօն Պուլ իր աշխարհաստատ գաւազանու,
որու շարժումէն կախում ունին ինքնակալութիւնները։ Անգլիոյ մէկ փափուքը և կայսրոյ տը-
լորին մէկ խօսիլը պիտի վար ձգէ պուլկարական զարհուրելի փոթորիկը, զոր քանի մը շա-
հախնդիր պետութեանց ծաղոս — նախարարներ գրգռեցին առ ի փորձ —, վերջը քաւ
լիցիով ձեռքերէն լուսողու համար իսկ Թուրքիա Պուլկարական անյագ կոկորդին կերա-
կուր տալէ շատեց ձանձրացած է։ Լացող աղուն միշտ կերակուր չեն տար, երբեմն ալ ծեծ։

*. Ալլաւմիա. Գիշ մըն ալ այս Ալլաւմիացիք չափը կ'անցնեն կոր։ Անցեալները Ալ-
պանիոյ զրկուած յանձնաժողովին նախագահ Իպրահիմ փաշա իր տեղեկագրին մէջ կը պար-
զէր Ալպանացիներուն պահանջները։ 1. Խաղաղութեան ժամանակ Բուսիլի ժողովուրդը
Բուսիլի մէջ կատարէ իր զինուորական ծառայութիւնը։ 2. Ալպաններէնը Ալպանիոյ բոլոր
փարժարաններուն մէջ ուսուցուի ազգային տառերով։ 3. Նախորդ կառավարութեան կողմէ
բռնի գրաւուած գէնքերը ետ տրուին։ 4. Վարչական գործերուն կանոնադրութեան հա-
մար պաշտօնի կաշտին տեղական լեզուին հմուտ անձեր։ 5. Ալպանիոյ լեռնոտ մասերը
երկրագործութեան յարմար չըլլալով, լեռնաբնակ աչգ աղքատ ու խեղճ ժողովուրդին ըն-
կերային կեանքն ու խեղճութիւնն ի նկատ տունելով մասնաւոր օրէնքներ կազմել և ըստ
այնմ կառավարել զանոնք։ 6. Ալպանացիներու ամենամեծ փափաքն ըլլալով որ Օսմ. տէ-
րութեան ամբողջութիւնը պահպանուի, հայրենիքէն ո՛չ մէկ մաս բաժնուի և ասոր համար
պատրաստ ըլլալով կեանքերնին ցոհելու, կը պահանջեն Բարձրագոյն Ատեան զրկել զանոնք
որ պատճառ եղան Ալբիկեան Տրիպոլիոյ լծնամիկին կողմէ սանտկոյ ըլլալուն։ 7. Առանց
հարկադրիչ պատճառի հրկիզուած ու քանդուած շէնքերը կառավարութեան կողմէ շին-
ուին կամ անոնց փոխարժէքը վճարուի։ 8. Ալպանիա որպէս զի կրթական տեսակէտով ալ
բարձրաւաճի, կառավարութեան կողմէ արագօրէն միջոցներ անօրինուին։ 9. Ալպանիոյ հան-
րային ու մասնաւոր ճամբաները շինուին։ 10. Կահանգային Ընդհ. ժողովներն ամէն տարի
երբ գումարուին և որոշումներ տան, անոնց գործադրմանը նախամեծարութիւն տրուի։ 11.
Հազ տարուի երկրագործութեան յառաջդիմութեան և ընդարձակման ու երկրագործնե-
րուն օժանդակութիւն ընծայուի երկրագործական պանքաներուն միջոցաւ։ 12. Կառուա-
ծահամարը կատարուի որդար եղանակաւ։ 13. Ներկայ պահանջները որպէս զի բարեօք
կերպով մը գործադրուին, հակակռքի մարմին մը հակադրութիւն կատարէ։ Արդ, Կառավա-
րութիւնը, որ Պետութեան վարչութեան վրայ շատ բարեացակամ տրամադրութիւններ
ունի, առ բոլոր առաջարկներն ալ ընդունեցաւ, և զեկոյց Ալպանացիներու որ այլեւս խա-
ղաղութեամբ մեկնին իրենց տեղերը։ Արդ, ըստ իրենց խոստման փոխանակ ցրուելու, բա-
լեցին Իսկիւպի վրայ. և հիմա կը քայեն եղեր Սելանիկի վրայ, եթէ ստոյգ է, տասներկու
հազար հազի զինեալ, հեռեկան Նոր պահանջներով։ 1. Իթթիհատի կուսակցութիւնը բոլորու
վին ցրուել և ջնջել անոր անունը։ 2. Իթթիհատի պարագլուխները (ձափա, Թալէալթ ևն.)
կախել։ 3. Վերադարձնել բոլոր գրաւուած գէնքերը և ուղղամտութեանը, ինչպէս նաեւ
ինքնապաշտպանութեան համար պետական գէնքեր բաժնել իրենց։ 4. Դահլիճէն հրաժա-
րեցնել Ղիլմի, Մահմուտ Մուխթար և Ֆէվկի փաշաները։ 5. Վարչապետութիւնը յանձնել
Բեամիլ փաշայի։ 6. Բարձրագոյն տառնին յանձնել Հազգը, Սալիտ փաշաներու գահիճ-
ները։ Նախարարաց Խորհուրդը զբաղեցաւ այս խնդրով և երկար խորհրդակցութիւններէ վերջ
որոշեց կառավարութեան արժանապատուութիւնը բարձր պահելու համար զինուորական
միջոցներ ձեռք առնել Ալպանացիներու այս ապօրէն ու ծայրայեղ արարքներուն պարա-
զութիւններուն դէմ։

*. Ներքին գործոց նախարար կարգուած է Ֆերիա փաշա։

*. Պետական ժողովոյ Հանր. շինութեանց և Հանր. կրթութեան ճիւղին նախա-

գահ և նախկին կուսակալ Պրուսայի Թէվֆիգ պէյ, որուն առաջարկուած էր Հանքուստ Շինութեանց նախարարութիւնը, վերջնականապէս մերժեց զայն:

* 330 ոչխարներ մէկ շանքով կայծակնահար. — Սղերդի մեր թղթակիցը հետեւեալ անօրինակ իւրը կը հազարդէ մեզի. — «Տեհի ոչխարները լեռը գտնուած միջոցին, յուսնիս 24ֆն. կայծակը զարկած է և երեք հարիւր երեսուն հարաւ մէկէն սպաննած է:»

* Կառնաժառանգ իշխանը կը մամբողջէ Եւրոպա. — Գահաժառանգ Քըլիան Եւրոպ իզգէտտին էֆ. մէկ երկու շաբաթէն պիտի ճամբորդէ Եւրոպա. իրեն պիտի ընկերակցի ծերակուտական Մանուէլ էֆ. Ազարեան: Իշխանը նախ պիտի երթայ Վիեննա, յետոյ Զուիցերիա, ուր մէկ ամիս պիտի ճամբորդէ ծպտեալ. իշխանին պիտի ընկերակցին նաև իր արարողագետը Նէսիպ պէյ և թիկնապահը:

* Սապա փաշա. — Եգիպտոսի Սապա փաշայի անուանումը, իբրև հեռագրական ու թղթատարական նախարար, վերջնականապէս որոշուած է: Սապա փաշա քանի մը պայման դրած է, որոնց մէկն այն է թէ անպաշտօն նախարար ըլլայ և նախարարաց խորհուրդին չի մասնակցի, որպէս զի Դահլիճի փոփոխութեան պարագային ինք ալ չհարկադրուի հրաժարական տալու:

* Երեսփոխանները նախարար չպիտի կրնան ըլլալ. — Կառավարութիւնը նոր ուրէնքով մը կ'արգիլէ երեսփոխաններուն՝ նախարարական պաշտօն ստանձնել, քանի որ անոնց պաշտօնն է միայն հակակշիռ ի գործ դնել կառավարութեան գործերուն վրայ: Այս օրինակով անմիջապէս երեսփ. Ժողովին պիտի ներկայացուի:

* Խաղաղութեան յոյսերը. — Թայմզ, մեկնելով Փարիզէն և Վիեննայէն եկած լուրերը, որոնք կ'ըսեն թէ խաղաղութեան պատերազմին վերջը հեռու չէ, անկեղծ յայտ կ'ըսեն որ այդ կարծիքը իրաւ ըլլայ:

Երկու պետութիւններն ալ, կ'ըսեն, զօրաւոր պատճառներ ունին պատերազմը վերջացած չկատուելու: Իսպանիա չի փափաքիր որ իր զօրքերը Ափրիկէի մէջ փակուին. ան արդէն ցոյց տուաւ որ կը խորշի Պալքաններու բռնկումէն: Թուրքիա պէտք է խաղաղութիւն փնտռէ, որովհետև ոչինչ կը շահի պատերազմի շարունակումէն, և կրնայ զինքը փախուի մատնել թէ՛ Նէրսը և թէ՛ Դուբը:

* Թայմզ խորհուրդ կու տայ թուրք պետական մարզաց որ պատուաւոր պայմաններով անմիջապէս վերջ տան պատերազմին:

~~~~~

#### Մ Ի Զ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Լ ՈՒՐԵՐ

Գաղղիոյ փարչապետ Մ. Բուանգարէի ընդունելութիւնն ի Ռուսիոյ դարպասէն մը կազմելու տասնիման փառաւոր եղած է, և զրկել անասան հիմերու վրայ հաստատուած է այսուհետև Ռուսիոյ և Գաղղիոյ դաշնակցութիւնը, որուն հիմա իբր յաւելումական մաս մը կ'ընթացայ ծովային դաշնագրութիւն մըն ալ: Խօսեցան ներկայ ամէնէն հրատապ խնդիրներու կարգադրութեան վրայ: Եւրոպիոյ ապագայ քաղաքականութիւնը, այս այսքիւլութեան ելքէն մեծապէս կախում ունի:

\* Մարտի Սուլթան Մօլլա Հաֆիզ վերջապէս հրաժարեցաւ գահէն, և իր տեղը Սուլթանական գահ բարձրացաւ իր եղբայրը Մօլլա Եուսուֆ:

#### Բ ՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

|                       |     |
|-----------------------|-----|
| Վերափոխումն Ս. Կուսին | 449 |
| Գերեզմաններ           | 454 |
| Խաղբերդի թեմէն        | 457 |
| Ցեղեկագրական          | 461 |

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎԶ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՌԷՆ-ԻՄԱՆԳՐԱԳԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպար. Օսմանեան Կործակցական Ընկ. Էպոստոլոս հասցէսի Թի 27

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԴ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան պատճառական Շաբաթաթերթը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյոք ամեն յուրերն՝ համառօտուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաթերթ կարդալու :

#### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

|                                                                                          |                 |
|------------------------------------------------------------------------------------------|-----------------|
| Թուրքիոյ համար                                                                           |                 |
| Տարեկան . . . . .                                                                        | Դիտել . արծ. 40 |
| Վեցամսեայ . . . . .                                                                      | » » 20          |
| Արաստահման                                                                               |                 |
| Տարեկան . . . . .                                                                        | Ֆրանք 10        |
| Վեցամսեայ . . . . .                                                                      | » 5             |
| Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Քոստով եւ կամ մէյ մէկ դրոցոց նամակադրումով : |                 |

#### Մէկ թիւ 1 Դանեկան



Նամակ, յօդուած, եւն. կը գրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԴ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց

Բերա

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank  
Patriarcat Arménien Catholique  
Péra Constantinople

- «ԹԱՆՈԹ» .— 1.— Արձագանգ կը հրատարակուի շաբաթ օրերը:  
2.— Խմբագրութիւնն պարտաւորեալ չէ անպատճառ կամ նայնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:  
3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:  
4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:  
5.— Ծանուցմանց համար մանաւոր պայմանագրութիւնք կրկատարուին:

## ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

«Աճագանգ» շաբաթաթերթիս Երկրորդ տարւան ա-  
ռաջին վեցամսեայն Յուլիս 28/10 Օգոստոսին լրացած ը-  
լալուն, նոյնին վեց ամսոյ համար բաժանորդ գրուած Պատ.  
եւ Մեծ. ընթերցողաց կը յիշեցնեմք որպէս զի իրենց բա-  
ժանորդութիւնը նորոգել հաճին քերթիս ստափնան մէջ դա-  
դարում չ'ըլլալու համար:

---

## ՈՒՂՂԵԼԻՔ

Թիւ 56 էջ 438. վարեն համրելով վեցերորդ տողին  
սկիզբը վարկի բառին տեղ պէտք է կարդալ հարկի: Եւ էջ  
440, 24<sup>րդ</sup> տողի մէջ փոխանակ եւի կարդա՛ ե: